ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 փետրվարի 2011 թվականի N 8-Ա

ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 121 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 1187-Ն որոշման 2-րդ կետը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի <<*Ռ. Բարսեղյանի մասին*>> N 121 կարգադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) 2-րդ կետը <<ընկերության>> բառից հետո լրացնել <<և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության>> բառերով.

2) <<3>>-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

<<3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեններին՝ *Ռոբերտ Բարսեղյանի* հետ կնքել համապատասխան աշխատանքային պայմանագրեր:>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ